ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան 10 մայիսի 2017թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Կ. Բալայանի

Անդամակցությամբ՝ Ա. Գյուլումյանի

Ա. Թունյանի

Քննության առնելով Սոնա Բագոյան Սուլախյանի անհատական դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Սոնա Բագոյան Սուլախյանը 18.04.2017թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան խնդրելով՝ «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73 հոդվածը, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 8-րդ կետի «ա» ենթակետը օրենսդրական բացի մասով, այնքանով, որքանով պետական տուրքի գումարի բաշխումը գործին մասնակցող անձանց միջև չի կարգավորվում օրենքով, ճանաչել ՀՀ Սահմանադրության /06.12.2015թ. փոփոխություններով/ 1-ին, 10-րդ, 60-րդ հոդվածի, 61-րդ, 63-րդ, 79-րդ հոդվածներին հակասող և անվավեր»:

2. Դիմողի փաստարկները հիմնականում հանգում են հետևյալին.

Դիմողը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածը, ինչպես նաև «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 8-րդ կետի «ա» ենթակետն իրավական անորոշության և օրենքի բացի հիմքով հակասում են ՀՀ Սահմանադրության 1-ին, 79-րդ հոդվածներին, ինչն էլ, իր հերթին, հանգեցնում է ՀՀ Սահմանադրության 10-րդ, 60-րդ , 61-րդ, 63-րդ հոդվածների խախտման:

Ըստ դիմողի՝ վիճարկվող իրավանորմերի անհստակությունը և բացը հնարավորություն են տալիս դատարանին հայցվորի վրա դնել պետական տուրքի վճարման պարտավորություն ոչ միայն բավարարված կամ մերժված հայցապահանջի համար, ինչպես բխում է օրենքի տառացի մեկնաբանությունից, այլ նաև առաջին ատյանի դատարանում հրաժարված հայցապահանջի մասով վերաքննիչ դատարանի կողմից գործի վարույթը կարճելու դեպքում:

Դիմողը գտնում է, որ դատարանի նման մոտեցումը հանգեցնում է նաև անձի՝ դատարանի մատչելիության իրավունքի խախտման: Անձը, հայց ներկայացնելով դատարան, ակնկալում է իր խախտված իրավունքների վերականգնում և պաշտպանություն: Եթե հայցվորը գործի քննության ընթացքում մասնակի հրաժարվում է իր ներկայացրած հայցից, որն ընդունում է դատարանը, և հայցվորն այդ մասով չի բողոքարկում, ապա մյուս կողմի ներկայացրած բողոքի բավարարման և գործի վարույթի կարճման դեպքում դատարանը չի կարող անձի վրա դնել պարտավորություն՝ վճարելու պետական տուրք՝ հրաժարված հայցապահանջի գումարի երեք տոկոսի չափով: Դատարանի նման մոտեցումը, որն ամրագրված չէ օրենքով, սահմանափակում է հայցվորի՝ դատարանի մատչելիության իրավունքը, և ստացվում է՝ դատարանը «պատժում է» հայցվորին հրաժարված հայցապահանջի համար, որը հակասում է անձի՝ արդար դատաքննության իրավունքին:

Դիմողի կարծիքով՝ «բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն» արտահայտությունն իրավական առումով անորոշ է, ձևակերպված է ընդհանուր և վերացական, որը հնարավորություն է տալիս դատարանին գործին մասնակցող անձանց վրա դնել պետական տուրքի վճարման այնպիսի պարտավորություն, որը նախատեսված չէ օրենքով՝ խախտելով անձի՝ դատարանի մատչելիության իրավունքը և ՀՀ Սահմանադրության 1-ին, 61-րդ, 63-րդ, 79-րդ հոդվածները: Նման պայմաններում խախտվում է նաև անձի սեփականության իրավունքը:

Գործի դատավարական նախապատմությունը վկայում է, որ դիմողը՝ Սոնա Աբգարի Բագոյան-Սուլախյանը հայց է ներկայացրել ՀՀ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան ընդդեմ Գայանե Խլղաթյանի՝ 24 000 000 ՀՀ դրամ գումարի նկատմամբ՝ սկսած 01.09.2009 թվականից մինչև պարտավորությունների փաստացի կատարման օրը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկվող տոկոսների գումարի բռնագանձման պահանջի մասին: Գործի քննության նախապատրաստական փուլում Սոնա Աբգարի Բագոյան-Սուլախյանը հստակեցրել է հայցը. այն է՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկվող տոկոսների բռնագանձման պահանջ է ներկայացրել 28.11.2014 թվականից մինչև 04.09.2015 թվականն ընկած ժամանակահատվածի համար 24 000 000 ՀՀ դրամ գումարի նկատմամբ: ՀՀ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը 07.04.2016 թվականի վճռով բավարարել է հայցը, և Սոնա Աբգարի Բագոյան-Սուլախյանից հօգուտ պետական բյուջե բռնագանձել 24 000 000 ՀՀ դրամ գումարի նկատմամբ հաշվարկված տոկոսագումար՝ սկսած 01.09.2009 թվականից մինչև 28.11.2014 թվականն ընկած ժամանակահատվածի համար, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկվող տոկոսների ընդհանուր գումարի 2 տոկոսը՝ որպես վճարման ենթակա պետական տուրքի գումար: Այսինքն, դատարանը պետական բյուջե գանձման ենթակա պետական տուրքի չափը կախվածության մեջ չի դրել հետագայում հայցվորի կողմից հայցագնի չափի հստակեցումից, և ներկայացված սկզբնական հայցադիմումի համար հաշվարկել է վճարման ենթակա պետական տուրք՝ այն բաշխելով կողմերի միջև՝ բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն՝ համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության 73-րդ հոդվածով սահմանված կանոնների: Ընդ որում, դիմողն իր փաստարկները ներկայացնելիս նշել է, որ՝ «... դատարանը ճիշտ է արել, որ 01.09.2009 թվականից մինչև 28.11.2014 թվականի ժամանակահատվածի տոկոսների համար պետական տուրքի գումարն իրենից է բռնագանձել, քանի որ ինքն անհիմն պահանջ է

ներկայացրել...»: Ավելին, դիմողը նաև հստակեցրել է, որ առաջին ատյանի դատարանի եզրահանգման հետ ինքը համաձայնել է և այդ իսկ պատճառով վճիռը չի բողոքարկել:

Սույն գործի շրջանակներում վերաքննիչ բողոք է բերել պատասխանողը: ՀՀ վերաքննիչ դատարանը 01.07.2016 թվականի որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարել է, ՀՀ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը 07.04.2016 թվականի վճիռը բեկանել և փոփոխել է. թիվ՝ ԵԿԴ/2633/02/15 քաղաքացիական գործի՝ ըստ հայցի՝ Սոնա Աբգարի Բագոյան-Սուլախյանի ընդդեմ Գայանե Համլետի Խլղաթյանի՝ 2.325.000 ՀՀ դրամի գումարի բռնագանձման պահանջի մասին, վարույթը կարճել, միաժամանակ արձանագրելով, որ Սոնա Աբգարի Բագոյան-Սուլախյանից հօգուտ պետական բյուջե պետք է բռնագանձել, ի թիվս այլնի, նաև 24 000 000 ՀՀ դրամ գումարի նկատմամբ՝ սկսած 01.09.2009 թվականից մինչև 28.11.2014 թվականն ընկած ժամանակահատվածի համար, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկվող տոկոսների ընդհանուր գումարի 3 տոկոսը՝ որպես վերաքննիչ բողոք բերելու համար օրենքով սահմանված պետական տուրքի գումար: ՀՀ վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայել է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում, որոնցում, բնականաբար, անդրադարձ չի եղել Սոնա Աբգարի Բագոյան-Սուլախյանի կողմից հրաժարված հայցագնի համար պետական տուրք վճարելու պարտականության իրավաչափության հարցին և, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի՝ «վերաքննիչ դատարանում բողոքի քննության ժամանակ առաջին ատյանի դատարանում հաստատված փաստերն ընդունվում են որպես հիմք, բացառությամբ այն դեպքի, երբ բողոքում վիճարկվում է այդ փաստը» դրույթով, որպես հիմք է ընդունել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 07.04.2016 թվականի վճռի՝ Սոնա Աբգարի Բագոյան-Սուլախյանի կողմից հրաժարված հայցագնի համար պետական տուրք վճարելու պարտականությունը սահմանելուն վերաբերող մասը: Այսինքն, դիմողի համար առաջացած անցանկալի իրավական հետևանքներն արդյունք են դեռևս ՀՀ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝

07.04.2016 թվականի վճռի, որի շրջանակներում դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել առ այն, որ պետական տուրքի հաշվարկի համար հիմք է հանդիսանում ներկայացված սկզբնական հայցադիմումը, իսկ հետագայում դրանում կատարված փոփոխությունների ռիսկը կրում են կողմերը: Ավելին, դիմողը չի առարկել այդ դիրքորոշման դեմ, չի վիճարկել այն վերաքննության կարգով, իսկ պատասխանողի կողմից բերված վերաքննիչ բողոքի շրջանակներում այդ հարցին որևէ անդրադարձ չի եղել և չէր էլ կարող լինել: Հետևաբար, դիմողի փաստարկներն առ այն, որ «... եթե հայցվորը գործի քննության ընթացքում մասնակի հրաժարվում է իր ներկայացրած հայցից, որն ընդունում է դատարանը, և հայցվորն այդ մասով չի բողոքարկում, ապա մյուս կողմի ներկայացրած բողոքի բավարարման և գործի վարույթի կարճման դեպքում դատարանը չի կարող անձի վրա դնել պարտավորություն՝ վճարելու պետական տուրք՝ հրաժարված հայցապահանջի գումարի երեք տոկոսի չափով…», ակնհայտ անհիմն են, սահմանադրաիրավական վեճ չեն առաջացնում, քանի որ համապատասխան իրավական հետևանքները դիմողի համար առաջացել են դեռևս ՀՀ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 07.04.2016 թվականի վճռով, որոնց ինքը համաձայնել է հենց իր իսկ կողմից բերված փաստարկներում, այլ ոչ թե ՀՀ վերաքննիչ դատարանի՝ 01.07.2016 թվականի որոշմամբ: Ընդ որում, այս համատեքստում ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը գտնում է, որ դիմողը չի սպառել դատական պաշտպանության միջոցները, քանի որ չի վիճարկել ՀՀ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 07.04.2016 թվականի վճիռը:

Համաձայն 2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 6-րդ կետի՝ սահմանադրական դատարան կարող է դիմել «յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը»: ՀՀ Սահմանադրությունն իր 101-րդ հոդվածին է վերապահել Սահմանադրական դատարան դիմելու կարգի սահմանումը: Այդ հոդվածի 6-րդ կետն իր կոնկրետացումն է ստացել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-

րդ հոդվածի 1-ին մասում, որը սահմանել է ֆիզիկական և իրավաբանական անձանց դիմումների ընդունելիության պայմանները: Ըստ այդ պայմանների՝ դիմում կարող է ներկայացնել այն ֆիզիկական կամ իրավաբանական անձը,

- որը հանդիսացել է ընդհանուր իրավասության կամ մասնագիտացված դատարաններում դատավարության մասնակից,
- որի նկատմամբ ընդհանուր իրավասության կամ մասնագիտացված դատարանի կողմից կիրառվել է որևէ օրենքի դրույթ,
- որի նկատմամբ վիճարկվող դրույթը կիրառվել է գործը լուծող վերջնական դատական ակտով,
- **որը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:**

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում նշված որևէ պայմանի բացակայության դեպքում անհատական դիմում ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձը սահմանադրական դատարան դիմելու համար **իրավասու սուբյեկտ չէ**:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ, 6-րդ կետերով և 69-րդ հոդվածի 7-րդ մասով, ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

Սոնա Բագոյան Սուլախյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

10 մայիսի 2017 թվականի
ՍԴԴԿՈ/1-10